ՀՐԱՆ ՀՈՐԻՈՑ — ԹԻՒ 15 — ՀՈՒՆԻՍ — 11 — ԱՓՐԻԼ 1864

ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ելլն շաբաթ օր հրատարակուի։
Տարեկան է 30 ղրուշ, վեցամսեայն 20 ղրուշ կանխիկ վճարելի։ Առաջ 40 փարա։
Օտաստանի փոշը 40 փարա ռճկ անգամի համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Պատրս երթևեկութեան ձախէը բաժանուըցաց կվերցուի։ — Խմբագրէն օրևան է է փոխէ պռոլեվար Սեվաստիօփօլ Ըիս 133։ — Հանրկոս վերաբերեալ որ և է գրուածք ասպնելի սա Տնօրէնն է կ. Պօլիս Օշնեվէլի խանի վերնայարկ Ըիս 3։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Հոգ.

Հով կըսենք օդին մէկ մասին շարժմանը, որ որոշեալ գնացք մ'ունենալով մէկ տեղէն միւսը կտեղափոխի։ Օդին որ և իցէ մասին մէջ երբ հաւասարակշռութիւնը խանգարի, հովը ծնունդ կառնու. խանգարման պատճառը ժերձակայ քաղաքներուն օդին տաքութեան աստիճանին տարբերութիւնն է. ինչպէս՝ թէ որ երկրիս որ և իցէ մասն աւելի տաքնայ, անոր դէմ եղած օդն ալ կտաքնայ, կտարածի, և աւելի թեթևնալուին օդին աւելի բարձր մասանցը մէջ կելնէ. հոն յառաջ կուգան հովերն, որոնք տաք գաւառներէն դէպ ի ցուրտերը կփչեն։

Երբ հաւասար մակերևոյթի ունեցող ջրոց հոսանքի մը վրայ պզտիկ քար մը նետես, անմիջապէս խոմբ մը կլոր օղակներ կձևանան ջրին մէջ, և երթալով կմեծնան ու կտարածուին։ Յայտնի է թէ ջրին երեսին վրայ տեսնուած այս շարժումը նետուած քարէն յառաջ կուգայ, որովհետև ջուրը կպմող հեղուկ մասանց հաւասարակշռութիւնը կխանգարէ։ Ըսպէս կըսէ նաև օդին մէջ յանկարծ մաս մը տաք օդ անցնելուատեն։ Սկզբ զատ՝ հողին վրայ երբ օդը կտարածի, կողմնակի ուր և իցէ ճնշում մը ծնունդ կառնու զազ օդին զանազան մասանց ծանրութեան պատճառաւ, որոնք տեղափոխել օդին տարածութենէն յառաջ եկած պարապը լեցընելու կաշխատին. ասով ծնունդ կառնուն նաև օդին ստորին մասանցը մէջ հովեր, որոնց գնացքը բոլորովին հակառակ է վերիններուն։

Երկրիս արևին բոլորտիքն ըրած շրջանը, արևին և լուսնին ձգողական զօրութիւնը, ամպոց իրարու վրայ ճնշումը հովեր հանելու գլխաւոր պատճառներ են։

Հովերն ամեն դիրքով կփչեն. ինչպէս՝ հորիզոնաւոր, ուղղահայեաց և խոտորնակի։ Հատ անգամ իրենց վրայ կդառնան, իրար կզարնեն, որոնցմէ կհետևին մրրիկ, փոթորիկ, թաթառ։ Այսու ամենայնիւ գիտնալ պէտք է թէ իրենց սովորական ընթացքներն երկրիս զուգահեռական են։

Հովերուն ընթացքին չորս գլխաւոր կէտերէն զատ՝ ինչպէս հիւսիս, հարաւ, արևմուտք և արևելք, 28 միջին կէտեր ալ կհաշուին, որոնց ամենուն մէկէն կըսուի վարդաձև ցուցակ հողմոց։ Հողմոց ընթացքը հողմացոյցով կորոշուի։ Իսկ անոնց արագութիւնը չափելու համար հողմաչափ պէտք է, որ շարժուն թևերով անիւ մ'է, որոնք որոշեալ ժամանակի մը մէջ ըրած շրջաններուընին հողմոց արագութիւնը կը չափեն։ Մեր կլիմայից մէջ հողմոց արագութիւնը 7—9 կանգուն է մէկ մանրերկրորդի մէջ։

Երեք կանգուն եղած ատեն բարեխառն է և անմահական։ Տասն և հինգ կանգունի մէջ բաւական սաստիկ։ Երեսուն կանգունով մրրիկ. իսկ քառասուն կանգուն արագութիւն ունեցած ատեն փոթորիկ կայ ըսել է։

Օդուածս կվերջացընենք՝ ուրիշ անգամի թողուլ կանոնաւոր ու անկանոն հողմոց, թաթառի և մառախուղի վրայ խօսելը։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

Հէրոյ վերաբերեալ էլեռուոր պեղկոթիւնի։
Տե՛ս Ըիս 11

Պէտք է զգուշանալ որ շերամատունը թռչուններ և հաւեր չկրնան մտնել, որովհետեւ սաստիկ սիրող են շերամի և վնասող. նոյնպէս օձը զանոնք ջուրի պէս կլլամ՝ եթէ ներս մտնել յաջողի։

Ներոպիոյ բարեկարգեալ մեթոտովը շերամի կրթութիւնն երեսուն օր կտևէ. շատերն այս միջոցը կարճելու փորձեր ըրած են, որ կրնայ ըլլալ կամ տաքութեան աստիճանը և կամ աննդեան թիւն ու քանակութիւնն աւելցընելով. բայց նկատելով որ այն ատեն աշխատութիւնը կծանրանայ, աւելի գործաւորաց կկարօտի և միանգամայն տերևի խիստ մեծ կորստեան պատճառ կըլլայ՝ մեծ մաս մը չգործածուած թողնելով, ետ կեցած են. և իրաւամբ՝ որովհետև բնութեան իմաստուն տնօրինութեան դէմ մեղանչած կըլլան, և սի բնութեան անհնազանդներն անպատիժ չեն մնար։

Նոյնպէս եթէ շերամի կրթութիւնն երեսուն օրէն աւելի տեւել ուզվի, ուրիշ տեսակ գժուարութիւններ ալ այս երեսէն կծագին, որովհետև եղանակն աւելի կտաքնայ. շատ անգամ փոթորիկներու կպատահի. օդը խիստ շատ տաք ըլլալով գործաւորը թեթևնի տերև ժողվել չկարենալով աւելի կկարծրանան։ Այնքանպէս քանի որ ժամանակն երկարի՝ այնքան վտանգի ենթակայ կըլլայ շերամը, որովհետև փորձն ալ հաւանականապէս հաստատած է թէ երեսուն օրը բնական և խիստ յարմար միջոց է։

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Թաղական տուրք

Սահմանադրութեան հաստատութենէն յառաջ գրեթէ իւրաքանչիւր ազգային անհատ ստիպուըուէր էր ամեն տարի իւր բնակած թաղին նկնղեղչոյն իւզագին և աղքատաց ողորմութեան նուէր ընծայել, նաև վարժարանին ծախքը տարեկան նպաստով մը հոգալ և միանգամայն մանաւանդ թաղական ուրիշ մանր ծախքերու։ Իսկ հիմա՝ ամենուն յայտնի է թէ՝ ասոնց յաջորդեց Թաղական տուրքը ազգային սահմանադրութեան տրամադրութեամբը։

Այս տրամադրութեան համեմատ քանի մը շաբաթէ ի վեր ազգային Ս. ժողովոյն Տնտեսական խորհրդարանին կողմանէ շրջաբերականներ ուղղուած են բոլոր թաղական խորհուրդներուն, որպէս զի փութան թաղական տրոց հաստատութիւնն ու բաշխումն ընել, իւրաքանչիւր թաղեցւոյ հաղորդել իւր վճարելիք տուրքին քանակութիւնը և հատուցանելու կոչում ընել։

Այս շրջաբերականներուն վրայ անշուշտ մինչեւ հիմա ամեն թաղական խորհուրդք առ հասարակ ձեռնարկած են իրենց այս պաշտօնը կատարելու։ Պռուկունճուփա և Խմատիյէ միացեալ թաղից խորհուրդն երեք ամիս յառաջ հաստատած ու բաշխած է թաղին տուրքը և գրեթէ կիսով չափ հաւաքած։ Ընչեալ խորհրդոյն և թաղեցւոց այս նախընթացութիւնը գովելի է արդարև, և կրնայ օրինակ ըլլալ ուրիշ խորհրդոց և թաղեցւոց։

Վաչէայոյս ենք որ իւրաքանչիւր ազգային անհատ իրեն համար սահմանուած թաղական տուրքը յօժարակամ վճարել կփութայ։ Թաղերն ըստ մեծի մասին հարուստ եկամուտ բերող կալուածներ չունին. ուստի թաղական տուրքը օգնութեան պիտի գայ անոնց ամեն տեսակ պիտոյքը հայթայթելու։ Ենթ կարծեր որ ազգային անհատի մը մտքէն անցնի թէ իւր բնական թաղին վարժարանին, աղքատաց և ուրիշ ծախքերը հոգալու մասնակցելէ ազատ է ինքը։ Մերն են անոնք ամենքն ալ, և քանի որ Հայոց անուն կկրեմք և Սահմանադրական Ս. ժողովութիւն ունենալնուս վրայ կպարծիմք, պէտք է որ մեր ծախքը մենք հոգանք ըստ մեր կարեաց։

Ազգային անհատ մը, որ ճշմարտիւ կսիրէ Ազգը և կփափաքի անոր օգտին ու յառաջադիմութեանը, անհնարին է որ զանայ իւր առ-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԿԱՆ ԹԵՐԹԻ

Հրատարակվում է ամեն Կիրակի օրը

Խմբագիր-հրատարակիչ Ա. Ա. Ալեքսանյան

Տարեկան բաժանորդագինը 9 մանեթ 1864 թ.

Ամսագրի հասցեն՝ Տփղիս, տ. Ալեքսանյան

Ամեն մի նամակ, որ ուղարկվում է խմբագրության անունով, պետք է ուղարկել ոչ թե խմբագրի անունով, այլ միայն խմբագրության անունով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՏՊԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍ